


կայացումը, գլոբալացվող գործընթացներում երկրի ինտեգրման քաղաքականությունը:

Այսպես, 2006թ. դրությամբ իրական հատվածում խոշորածավալ ներդրումներ են կատարվել հիմնականում այն ոլորտներում, որտեղ ապահովվում է կապիտալի բարձր շահութաբերության մակարդակ: 2006թ. դրությամբ ներդրումների տեսակետից գերակա ուղղություն է համարվում կապի ոլորտը՝ 135 մլն ԱՄՆ դոլար, որտեղ ձևավորված մրցակցությունը նպաստել է այս ոլորտում կատարվող ներդրումների աճին (Գծապատկեր 4):

Այսպիսով, հարկային խթանները անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման են հանդիսանում բարենպաստ ներդրումային միջավայրի ստեղծման համար: Հետևաբար, տնտեսության բոլոր «անիվներ»-ի միաժամանակյա աշխատանքի շնորհիվ հնարավոր կլինի ապահովել տնտեսության զարգացման բարձր մակարդակ:



Գծապատկեր 4. ՀՀ իրական հատվածում խոշորածավալ ներդրումները ըստ ոլորտների, 2006թ (մլն ԱՄՆ դոլար)

ԱՆՆԱ ԲԱՅԱԴՅԱՆ
ՀՊԱՀ ասիստենտ

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՀԱՇՎԵԿՇՈՒ ԻՐԱՅՎԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄ ՈՒ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Տնտեսավարման նոր հարաբերությունների պայմաններում էլ ավելի է կարևորվում բանկային համակարգի դերի բարձրացումը, քանի որ այդ ոլորտում գործող յուրաքանչյուր առևտրային բանկ նպաստում է երկրի տնտեսական աճի ապահովմանը: Ուստի բանկի կարևորագույն հիմնախնդիրներից մեկը նրա իրացվելիությունն է, որը պայմանավորված է պարտավորություններ կատարելու կամ ակտիվների աճն ապահովելու ունակությամբ: Բանկի իրացվելիության ամբողջական պատկերը ստանալու նպատակով անհրաժեշտ է ուսումնասիրել ինչպես նրա ակտիվները, այնպես էլ պարտավորությունները: Հետևաբար դրանց գնահատման ու վերլուծության համար՝ որպես տեղեկատվական հիմնական աղբյուր, հանդես է գալիս բանկի հաշվապահական հաշվեկշիռը:

Առևտրային բանկի հաշվեկշռի իրացվելիության վերլուծության ընթացքում դրվում են հետևյալ խնդիրները.

- փաստացի իրացվելիության որոշումը,
- փաստացի իրացվելիության համապատասխանությունը ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված նորմատիվներին,
- բանկի կողմից փաստացի հաշվարկված իրացվելիության գործակիցների իրական արժեքների և նորմատիվների միջև շեղումների հետևանքով առաջացած գործոնների պարզաբանումը¹:

Իրացվելիությունը որոշող հիմնական գործոններ են հանդիսանում ներգրավված միջոցների (դեպոզիտների) տեսակները, գործառնությունների ժամկետները, ներգրավված միջոցների աղբյուրները և դրանց բազայի կայունությունը: Օգտագործելով հորիզոնական, ուղղահայաց և համեմատական վերլուծության մեթոդները՝ կարելի է որոշել հաշվեկշռի ակտիվում և պասիվում տեղի ունեցող փոփոխությունները, այնուհետև ներկայացնել բանկի իրացվելիության վրա դրանցից յուրաքանչյուրի ազդեցության մեծությունը:

Բանկի կազմավորման աղբյուրներում հիմնական տեղ են զբաղեցնում ներգրավված ավանդներն ու դեպոզիտները, ինչպես նաև հաշվարկային և ընթացիկ հաշիվներում եղած միջոցները: Ներգրավված միջոցների ընդհանուր գումարում առանձին կազմավորման աղբյուրների տեսակարար կշիռը բնութագրում է յուրաքանչյուր տեսակի ռեսուրսի տեղն ու դերը վարկային գործընթացում: Յուրաքանչյուր բանկի համար, նրա եկամտաբերության տեսանկյունից, գերադասելի են ներգրավված միջոցների կառուցվածքի փոփոխությունները ավանդատուների ու իր սեփական հատվածի համար, քանի որ դրանք ավելի նախընտրելի են լինում, քան միջբանկային վարկերը:

Միաժամանակ, իրացվելիության վերլուծության ընթացքում նպատակահարմար է քննարկել ակտիվային

¹ Բարայան Վ. Բանկային գործի հիմունքներ, Երևան 2003, 104 էջ:

գործառնություններում ներգրավված և տեղաբաշխված միջոցների ժամկետների համապատասխանության հարցը: Հատկապես առևտրային բանկերի կողմից կարճաժամկետ տեսքով ներգրավված միջոցները կարող են տնտեսական նորմատիվների սահմաններում օգտագործվել ոչ միայն կարճաժամկետ, այլ նաև ավելի երկար ժամկետով տրամադրման համար: Ուստի բանկի առջև հարց է առաջանում՝ սահմանել գործընթացի այնպիսի ձև, որպեսզի կարողանա կարճաժամկետ ներգրավված միջոցներն օգտագործել երկարաժամկետ ներդրումների դեպքում: Դրա համար անհրաժեշտ է հաշվարկել կարճաժամկետ միջոցները երկարաժամկետի փոխակերպման գործակիցը (Q_{ϕ}): Վերջինիս հաշվարկման հիմքում կարող է հանդես գալ ֆրանսիական բանկային համակարգի կողմից մշակված և արդեն ներդրված այն մեթոդը, ըստ որի կարճաժամկետ միջոցների որոշակի մասը ուղղվում է երկարաժամկետ ներդրումների համար և որոշվում հետևյալ բանաձևով.

$$Q_{\phi} = \frac{Y_{\text{ԼՄ}} - Y_{\text{ՎՆ}}}{Y_{\text{ԼՄ}}} \cdot 100\%, \quad (1)$$

որտեղ՝

$Y_{\text{ԼՄ}}$ – կարճաժամկետ ներգրավված միջոցները,

$Y_{\text{ՎՆ}}$ – կարճաժամկետ վարկերն ու կապիտալ ներդրումները:

(1) բանաձևում համարիչը իրենից ներկայացնում է կարճաժամկետ ներգրավված միջոցների այն մասը, որն ուղղվում է երկարաժամկետ նպատակով օգտագործման համար:

Հայաստանի բանկային համակարգի համար այս բանաձևը կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ.

$$Q_{\phi} = (1 - \gamma_{\text{ԶԲ}} / \gamma_{\text{ԶԲ}}) \cdot 100\%, \quad (2)$$

որտեղ՝

$\gamma_{\text{ԶԲ}}$ – բանկի և նրա մասնաճյուղերի վարկային հաշիվներից տրամադրվող կարճաժամկետ վարկերի և այլ կարճաժամկետ ներդրումների դեբետային շրջանառությունը (մինչև մեկ ամիս մարման ժամկետով),

$\gamma_{\text{ԶԶ}}$ – բանկի և նրա մասնաճյուղերի ավանդային (դեպոզիտային) հաշիվում ստացվող միջոցների գծով կրեդիտային շրջանառությունը (մինչև մեկ ամիս մարման ժամկետով՝ ներառյալ ցպահանջ հաշիվները):

Հաշվարկի համար հիմք են հանդիսանում բանկի տարեկան հաշվապահական հաշվեկշռի տվյալները կամ բանկի մասնաճյուղի հաշվեկշռային կամ արտահաշվեկշռային հաշիվների գծով շրջանառության տեղեկագրերը:

Այսպիսով, միջոցների այն ընդհանուր գումարը, որ բանկն ունակ է տրամադրելու երկարաժամկետ ներդրումների համար, հաշվարկվում է հետևյալ բանաձևի օգնությամբ.

$$ԵՆ = (\gamma_{\text{ՀՎ}} + \gamma_{\text{ԶԶ}} - \gamma_{\text{ՀՎ}}) \cdot Q_{\phi} + ԶՄ_{\text{Վ}} + ԶԵ_{\text{ԶԶ}}, \quad (3)$$

որտեղ՝

$ԵՆ$ – երկարաժամկետ ներդրումներն են,

$\gamma_{\text{ՀՎ}}$, $\gamma_{\text{ՀՎ}}$ – ցպահանջ ավանդային (դեպոզիտային) հաշիվներում եղած միջոցները համապատասխանաբար հաշվետու ժամանակաշրջանի սկզբում և վերջում,

$\gamma_{\text{ԶԶ}}$ – ցպահանջ ավանդային (դեպոզիտային) հաշիվներում ստացվող միջոցների կրեդիտային շրջանառությունը՝ մինչև մեկ ամիս մարման ժամկետով,

Q_{ϕ} – կարճաժամկետ միջոցները երկարաժամկետի փոխակերպման գործակիցը,

$ԶՄ_{\text{Վ}}$, $ԶԵ_{\text{ԶԶ}}$ – կապիտալ ծախսերի ֆինանսավորման և վարկավորման համար նախատեսված հաշիվներում միջոցները և մեկ ամսից ավել ժամկետով ավանդները (դեպոզիտները), համապատասխանաբար հաշվետու տարվա սկզբում և վերջում,

$ԿԵ_{\text{ԶԶ}}$ – կապիտալ ծախսումների ֆինանսավորման և վարկավորման համար միջոցների ստացման գծով կրեդիտային շրջանառությունը:

Առաջարկված բանաձևերի և հաշվարկների կիրառումը կարող է օգնել առևտրային բանկերին՝ ավանդային (դեպոզիտային) գործառնությունների կառավարման գործընթացը և իրացվելիությունը բավարար մակարդակի վրա պահելու գործում:

Բանկի հաշվեկշռի իրացվելիության վերլուծության գործընթացում նպատակահարմար է առաջ քաշել իրացվելիության այնպիսի սկզբունքներ, որոնց օգնությամբ հնարավոր կլինի պահպանել ավանդների (դեպոզիտների) և տեղաբաշխված միջոցների ժամկետների միջև օպտիմալ փոխհարաբերություն:

Իրացվելիությունը կարելի է հասկանալ նաև որպես պաշար կամ դրամական միջոցների հոսք: Պաշարների տեսանկյունից իրացվելիությունը ենթադրում է ակտիվների գնահատում, որոնք կարելի է փոխակերպել կանխիկ դրամի: Տվյալ դեպքում իրացվելի ակտիվների բավարար քանակությունը որոշելու համար պետք է իրացվելի միջոցներում եղած պաշարները համեմատել դրանց պահանջարկի հետ: Սակայն այս դեպքում հաշվի չեն առնվում այնպիսի իրացվելի միջոցներ, որոնք կարելի է ստանալ վարկային շուկաներում և եկամուտների ներհոսքի տեսքով: Եթե իրացվելիությունը դիտվում է որպես դրամական միջոցների հոսք, ապա հաշվի են առնվում բանկի ոչ միայն քիչ իրացվելի ակտիվներն էլ ավելի իրացվելի դարձնելու հնարավորությունը, այլև բանկի՝ ինքնուրույն վարկ ձեռք բերելու ունակությունը և գործառնական գործունեությունից կանխիկ դրամի հոսքի ապահովումը:

Իրացվելիության գնահատման համար կիրառվող չափանիշները հիմնված են «դրամական միջոցի պաշար» հասկացության վրա և ըստ դրա՝ վերլուծությունը կատարվում է իրացվելիության հետևյալ գործակիցների օգնությամբ.

¹ Батракова Л.Г. Экономический анализ деятельности коммерческого банка. М., 1999, 233 с.

Q₁ – սահմանափակ իրացվելիությամբ միջոցների համար (միջոցներ ցապահանջ հաշիվներում և ժամկետային ավանդներում՝ մինչև 6 ամիս ժամկետով),
 Q₂ – միջին իրացվելիությամբ միջոցների համար (միջոցներ ժամկետային հաշիվներում 6 ամսից մինչև 1 տարի մարման ժամկետով),
 Q₃ – բարձր իրացվելիությամբ միջոցների համար (միջոցներ ժամկետային հաշիվներում 1 տարուց ավել ժամկետով):
 Ընդհանուր առմամբ, իրացվելիության գործակիցները հաշվեկշռի ակտիվի տարբեր հոդվածների հարաբերակցություններն են պասիվի որոշակի հոդվածների նկատմամբ կամ հակառակը:
 Իրացվելիության վերոնշյալ բոլոր գործակիցները (Q₁) կարելի է հաշվարկել հետևյալ ընդհանուր բանաձևի միջոցով.

$$Q_1 = \frac{V_{\text{պ}}}{\text{ՆՄ}} \cdot 100\%, \quad (4)$$

որտեղ՝

V_պ – համապատասխանաբար մինչև 6 ամիս, 6 ամսից մինչև 1 տարի և 1 տարուց ավելի ժամկետով տրամադրված վարկերի (փոխառությունների) գծով պարտքերը,
 ՆՄ – ներգրավված միջոցները (ավանդներ, դեպոզիտներ) վերը բերված Q₁, Q₂ և Q₃ գործակիցներին համապատասխան:

Որպես կանոն՝ նշված գործակիցները պետք է 100%-ից ցածր լինեն, որպեսզի համարվեն արդյունավետ, քանի որ բավականին բարձր լինելու դեպքում բանկերը շահագրգռված չեն լինի ներդնելու իրենց միջոցները վարկային և ներդրումային գործառնություններում: Բանկերը, որպես կանոն, իրացվելիության վատագույնը համընթաց՝ սկսում են բարձրացնել տոկոսադրույքները: Իրացվելիության գործակիցների աճի իմաստը բացատրվում է նրանով, որ բանկերը ձգտում են այդ խնդիրը լուծել պասիվների կառավարման միջոցով, այսինքն՝ շուկայում ոչ բավարար միջոցները լրացվում են փոխառությամբ, այլ ոչ թե ակտիվների վերախմբավորմամբ: Իրացվելիության գործակիցը, որպես վարկերի և ավանդների (դեպոզիտների) հարաբերակցություն օգտագործումը, ենթադրում է, որ փոխառությունները հանդիսանում են եկամուտ բերող ակտիվներից նվազագույն չափով իրացվելիներ: Հետևաբար, որքան ներդրումների մեծ մասը տեղավորվի փոխառություններում, այնքան ցածր կլինի իրացվելիության գործակիցը: Այս ցուցանիշի թերությունը կայանում է նրանում, որ դրա կիրառման ժամանակ ոչ մարման ժամկետների, ոչ էլ վարկերի պորտֆելի որակի վերաբերյալ ոչինչ հայտնի չէ, այն մաս չի որոշում իրացվելի միջոցների նկատմամբ պահանջարկը: Օրինակ, որևիցե մի բանկ, որի գործակիցը հավասար է 0.7-ի կամ 70%-ի, կարող է ավելի իրացվելի լինել, քան այն բանկը, որի իրացվելիության գործակիցը կազմում է 0.5 կամ 50%, եթե առաջինի ներդրումները կայուն են, իսկ երկրորդում առկա են տատանումները: Հետևաբար, վերը նշվածը մասնատվածություն չի տալիս այն ակտիվների մասին, որոնք չեն ներառվել վարկային պորտֆելի մեջ: Կամ այլ օրինակ. մի բանկը կարող է գետնեղել կանխիկի տեսքով դրամարկղում իր ավանդների (դեպոզիտների) և կարճաժամկետ պետական արժեթղթերի 20%-ը, իսկ մյուսը՝ բանկային կառույցների ու անշարժ գույքի մեջ, և երկու դեպքում էլ կլինի միևնույն գործակիցը (վարկերի և ավանդների հարաբերակցությունը):

Իրացվելիության մակարդակի մեկ այլ ցուցանիշ, որը հիմնված է «պաշար» հասկացության վրա, հանդիսանում է մի գործակից, որը բնութագրում է իրացվելի ակտիվների բաժինը բանկի պարտավորություններում կամ իրացվելի ձևով բանկային պարտավորություններում պահվող բաժնեմասը: Վերը նշվածն արտահայտվում է հետևյալ բանաձևով.

$$Q = \frac{\text{Իրացվելի ակտիվներ}}{\text{Պարտավորություններ (ավանդներ)}} \quad (5)$$

Այս ցուցանիշը ավելի կատարելագործված է համեմատած նախորդի հետ, քանի որ բնութագրում է իրացվելի ակտիվների ուղիղ հարաբերակցությունը պարտավորություններին: Տվյալ ցուցանիշի թերությունը կայանում է նրանում, որ պասիվ վիճակում գտնվող ակտիվների զգալի մասը իրականում չի կարող իրացվել վարկային պահանջմունքները բավարարելու համար, և միայն պարտադիր պահուստները կարելի է օգտագործել բանկից հանվող ավանդների փոխհատուցման համար: Մյուս թերությունը կայանում է նրանում, որ այն հաշվի չի առնում այլ իրացվելի ակտիվները, օրինակ՝ գանձապետական և կարճաժամկետ արժեթղթերը, ինչպես նաև այն չի արտահայտում այլ աղբյուրներից միջոցներ ներգրավելու ունակությունը: Հետևաբար, ակտիվների ծածկման աստիճանը բաժնետիրական կապիտալի հաշվին բնութագրվում է բանկի բազմարկիչի (մուլտիպլիկատորի) միջոցով, որն արտահայտվում է հետևյալ բանաձևի միջոցով.

$$\text{Բազմ.} = \frac{\text{Ակտիվներ}}{\text{Բաժնետիրական կապիտալ}} \quad (6)$$

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ բանկի բաժնետիրական կապիտալն իրենից ներկայացնում է հնարավոր կորուստների ծածկման համար ամենաերաշխիքային հիմնադրամը: Որքան բարձր է բազմարկիչի մեծությունը, այնքան էլ ավելի է մեծանում բանկի սնանկացման հավանական ռիսկը, քանի որ ըստ միջազգային հաշվարկների՝ այդ հարաբերակցությունը արդյունավետ է 5:1-ի դեպքում:

Իրացվելիության գործակիցների հաշվարկման մեթոդաբան, որն օգտագործվում է հայրենական բանկային պրակտիկայում, լուրջ վերամշակման կարիք ունի: Կասկած են առաջացնում իրացվելիությանը վերաբերող և արդեն օգտագործվող նորմատիվները: Առևտրային բանկերի իրացվելիության և վարկունակության մակարդակների օպերատիվ կարգավորման համար անհրաժեշտ է պարբերաբար վերանայել

սահմանված նորմատիվները՝ կախված տնտեսության ընդհանուր վիճակից, սեզոնային ու մրցակցային տատանումներից: Մեր կարծիքով, սահմանված գործակիցների օպերատիվ վերլուծության համար կարելի է օգտագործել եռամսյա, վեցամսյա, իննամսյա և իրացվելիության այլ գործակիցներ, որոնք հիմնվում են ակտիվային և պասիվային հոդվածների հարաբերակցությունների վրա՝ ներառելով ըստ սահմանված ժամկետի (3, 6 և այլն ամիսներով) ներգրավված և տեղաբաշխված միջոցները: Ընդ որում, որքան փոքր է ներգրավված ավանդի (դեպոզիտի) ժամկետը, այնքան պետք է բարձր լինի իրացվելիության գործակիցը: Միաժամանակ ակտիվի և պասիվի հոդվածների համեմատումն ըստ ժամկետների՝ կարևոր է կատարել ըստ յուրաքանչյուր հաճախորդի՝ օգտագործելով անալիտիկ հաշվառման տվյալները:

Բանկի իրացվելիության պահպանման լրացուցիչ գործոններից են համարվում նաև մեկ վարկառուին տրամադրվող վարկի գումարի չափի սահմանափակումը և վարկերի դիվերսիֆիկացիան, այսինքն՝ դրանց տրամադրումը հնարավոր է մեծ թվով հաճախորդներին՝ պահպանելով վարկի ընդհանուր գումարի չափը:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը առևտրային բանկերի միջոցով իր իրացվելիությունը պահպանելու համար սահմանել է կոնկրետ պարտադիր հարաբերակցություններ բանկի սեփական և ներգրավված միջոցների միջև: Հաշվեկշռի իրացվելիության գործակիցների վերլուծության գործընթացում կարող են բացահայտվել շեղումներ՝ մի կողմից դրանց թույլատրելի արժեքների իջեցմամբ, մյուս կողմից որոշակիորեն դրանց էական բարձրացմամբ: Առաջին դեպքում առևտրային բանկերին իրավունք է վերապահվում մեկամսյա ժամկետում իրականացնել իրացվելիության գործակիցների հաշվարկներ՝ նորմատիվային արժեքներին համապատասխան: Բանկերը դա կարող են անել միջբանկային վարկերի, կրեդիտորական պարտքերի կրճատման, ինչպես նաև բանկի սեփական միջոցների ավելացման հաշվին: Չնայած պետք է ի նկատի ունենալ, որ նոր բաժնետոմսերի թողարկմամբ լրացուցիչ կապիտալի ներգրավումը կհանգեցնի շահաբաժինների կրճատմանն ու փայտերերի դժգոհությանը: Առևտրային բանկերի կողմից կենտրոնական բանկի սահմանած իրացվելիության նորմատիվներից յուրաքանչյուրի գծով շեղում լինելու դեպքում մեծացվում է հատկացումներ կատարելու չափը պարտադիր պահուստային հիմնադրամում¹:

Այսպիսով, բանկի ֆինանսական կայունությունը նրա գոյատևման և հաշվարկա-վարկային ակտիվ գործունեության իրականացման վճարող պայմաններից մեկն է: Դրա համար բանկի ֆինանսական դրության վերլուծության ժամանակ խիստ կարևորվում է իրական գնահատական տալը՝ նրա հոսալիության, հաշվեկշռի իրացվելիության և սահմանված տնտեսական նորմատիվների վերահսկման, ինչպես նաև գործունեության արդյունավետության վերաբերյալ:

Ա. ԲԱՏԻԿՅԱՆ

*Ճարտարապետա-շինարարական
համալսարանի ասպիրանտ*

ՖՈՆԴԵՐԸ ՈՐՊԵՍ ՆՈՐԱՄՈՒՅԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԻՔ

Կազմակերպությունների այնպիսի կազմակերպաիրավական ձևը, ինչպիսին ֆոնդերն են, տարածում են գտել հասարակական կյանքի ամենատարբեր ոլորտներում:

Իրավունքների սահմանափակությունը և հասարակության համար նշանակալի նպատակներին հասնելու ուղղվածությունը ֆոնդերը վերածվում են պետական քաղաքականության իրականացման յուրահատուկ գործիքի՝ ֆինանսական, սոցիալական, գիտական և այլ բնագավառներում:

Ֆոնդերի նպատակային գործունեության իրականացումն ապահովելու համար պետությունը ֆոնդերին տրամադրում է մի շարք հարկային և այլ արտոնություններ:

Հարկային արտոնություններից օգտվելու հնարավորությունը և գործունեության իրավական կարգավորման անբավարար աստիճանը նպաստել են դրանց արագորեն ավելացմանը նաև ձեռնարկատիրության բնագավառում: Պետական և ոչ պետական ֆոնդերը հիմնականում ծառայել են մեկ նպատակի՝ հավաքագրելու և վերաբաշխելու միջոցները: Պետական մակարդակով այդ նպատակի համար ստեղծվում են պետական արտաբյուջետային ֆոնդեր, որոշակի միջոցների ֆոնդեր, գիտական ֆոնդեր և այլն: Մասնավոր ֆոնդերը ամենից հաճախ ստեղծվում են տրամադրվող հարկային և այլ արտոնություններից օգուտ քաղելու նպատակով: Վերջերս, խստացնելով ֆոնդերի գործունեության նկատմամբ վերահսկողությունը, ակնկալվում է, որ ձեռներեցության ոլորտում դրանց հետագա ավելացումը կկանխվի: Եվ այդ ամենի հետ մեկտեղ ֆոնդերի օգտագործումը որպես գործիք՝ իրականացնելու համար պետական որոշակի քաղաքականություն, զարգացման նոր թափ է առնում:

Նորամուծական գործունեությունը վերջին ժամանակներս ավելի ու ավելի հաճախ է հայտնվում պետության ուշադրության կենտրոնում: Այս փաստի մասին են վկայում «Հայաստանի Հանրապետությունում ինովացիոն գործունեության հայեցակարգի», «Հայաստանի Հանրապետությունում ինովացիոն համակարգի ձևավորման 2005-2010 թվականների ծրագրի», «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի և ոլորտին առնչվող այլ փաստաթղթերի ընդունումը, ինչպես նաև այլ իրավական ակտերում կատարվող համապատասխան փոփոխություններն ու լրացումները:

¹ Բանկային գործ. Բ. Ասատրյանի խմբագրությամբ, Երևան 2004, 720 էջ: